ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության <<Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկը, որը գտնվում է ՀՀ, ք.Երևան, Նալբանդյան 28 հասցեում, ստորև ներկայացնում է ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2014/4ՃՀ ծածկագրով բաց ընթացակարգի արդյունքում 17.07.2014թ-ին կնքված պայմանագրում 09.09.2014թ.-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառը	ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2014/4ՃՀ ծածկագրով պայմանագրի շրջանակներում Մ-2 Երևան – Երասխ – Գորիս – Մեղրի – Իրանի սահման կմ276–կմ297 5կմ առանձին հատվածների հիմնանորոգման աշխատանքների նախագծով նախատեսված նոր մետաղական խողովակները փոխարինվել են նախկինում պահեստավորված մետաղական խողովակներով, որոնք ունեն համապատասխանության հավաստագիր:
Փոփոխության նկարագրություն:	Փոփոխության արդյունքում նվազեցվել է Պայմանագրի գինը և Պայմանագրի 5.1 կետում կատարվել է համապատասխան փոփոխություն: Պայմանագրի թիվ 1 և 1.1 «Ծավալաթերթ-նախահաշիվ» հավելվածներում կատարվել են համապատասխան փոփոխություններ: Պայմանագրի՝ «Օրացուցային գրաֆիկ» հավելվածում կատարվել է համապատասխան փոփոխություն: Պայմանագրի՝ «Վճարման ժամանակացույց» հավելվածում կատարվել է համապատասխան փոփոխություն:
Փոփոխության հիմնավորում:	Համաձայն Պայմանագրի թիվ 8.4 կետը և հեղինակային հսկողություն իրականացնող «Ճաննախագիծ» ինստիտուտ ՍՊԸ-ի 12.08.2014թ. թիվ 33, 25.08.2014թ. թիվ 38 մասնագիտական եզրակացությունները: Կատարված փոփոխությունները չեն գերազանցում պայմանագրային արժեքի 15%-ը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Տիգրան Ջանոյանին:

Հեռախոս՝ 010 /580-523/

Էլ. փոստ՝ tjanoyan@transportpiu.am

Այլ անհրաժեշտ տեղեկություններ՝ -

Պատվիրատու՝ «Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ